

երեք մղոն հեռաւորութեամբ, ճիշդ կէս ճանապարհին, Հոսքէլի գերեզմանին և Յունաց Ս. Եղիա վանքին խիստ մօտիկ: Քրիստոնեայ բարեպաշտութիւնը՝ եկեղեցւոյ վաւերական Աւետարաններէն զատ, կարգ մը անվաւեր զրքեր ևս օգտագործած և իր ներշնչարանը ըրած է, մասնաւորապէս Յակօրոս Տեառնեղբօր «Նախաւետարանը» կամ «Քրիստոսի Մանկութեան Աւետարանը», որ հայերէն ալ թարգմանուած և տպագրուած է, ու ներշնչումներ տուած ջերմեռանդ հաւատացեալներու՝ որ կարողացեր են անոնց շինիչ պատմուածքներու ազդեցութեամբն ստեղծելու քրիստոնէական բեղուն արուեստ մը: Բեթղեհէմի կէս ճանապարհին վրայ կառուցուած այդ վանքը Քրիստոսի Մանկութեան Աւետարանէն ծագում առած է: Տիրամայր Ս. Կոյսը՝ Յովսէփին և այլոց հետ, Քրիստոսի ծնունդէն առաջ, Երուսաղէմէն կը ճամբորդէ գէպի Բեթղեհէմ: Երեք մղոն ճամբորդելէ յետոյ, ան ջրհորի մը քով կը հանգչի: Արաբներ այդ տեղւոյն կ'ըսեն Գարիզնա, որ կը նշանակէ տեղի հակագոստան: Ս. Կոյսը, նոյն միջոցին, դարձեալ ըստ Մանկութեան Աւետարանին, կը յարէ թէ՛ «Աչքերուս երկու ժողովուրդներ կ'երևան, մին՝ հեկեկազին, կ'արտասուէ և կը հեծէ, միւսն՝ մեծապէս կը խայտայ և կը հրճուի»: Ահա՛, ըստ աւանդութեան, Ս. Կուսին այդ հանգստեան տեղւոյն վրայ է որ քրիստոնէական ջերմեռանդութիւնը կառուցած է վանք ու եկեղեցի, ի յիշատակ և ի պատիւ Ս. Կուսին: Մետափրատ՝ Յոյն Սրբագիրը (Ժ. դար) կը յիշատակէ զանոնք և կ'ըսէ թէ անոնք կառուցուած էին Ե. դարուն, «Բեթղեհէմի ճանապարհին վրայ ի յիշատակ Տիրամօր», և այն վանքին տեսուչն էր, 460ին, Ս. Թէոդոս՝ նշանաւոր մենակեացը, Բեթղեհէմի տրեւելեան կողմը գտնուած իր սեպհական վանուց շինութենէն առաջ (Migne, P. G. Հատ. 119, էջ, 476): 570ին Իտալացի Անտոնինոս ուղևորը կանգուն տեսած է նոյն վանքը իր բոլոր շէնքերով, որ հաւանաբար կործանուեցաւ պարսկական յարձակումներէն (614), և կամ Յաթիմեան էլ Հաքէմի (996 – 1021) հրամանաց հետեանքով: 1106ին, ռուս վանահայր Դանիէլ կ'այցելէ այս ուխտատեղին և իր «Ուղեգրութեան» մէջ կը յիշէ թէ եկեղեցի և վանք մը շինուած էր այս տեղ ի պատիւ Ս. Կուսին, բայց այժմ, կը յարէ, անոնք աւերակ վիճակ մը ունին. այս է պատճառը որ ան չի յիշատակուիր մեր